ՀՀ Արմավիրի մարզի Արևիկի գյուղական
համայնքի ղեկավար՝ Գ. Ծատուրյանի
2012թ. կատարած աշխատանքների

Հաշվետվությունը

21.01.2013թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևիկի գյուղական համայնքի ղեկավարը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

2012թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ - տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2012թ. ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը հնարավորության սահմաններում աջակցում է համայնքի բնակչությանը գյուղատնտեսական աշխատանքների իրականացման, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացման գործում:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև աշնանացան հացահատիկի ցանքսը ժամանակին կատարելու ուղղությամբ:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները:
Հիմնականում զբաղվում են խաղողագործությամբ, ինչպես նաև բանջար-բոստանային կուլտուրաների մշակությամբ:

Տարեց-տարի փոխվում է մշակովի հողատարածքների կառուցվածքը. կրճատվել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները, ավելացել են խաղողի, պտղի և բանջար-բոստանային կուլտուրաների տեսակարար կշիռը, որն անհամեմատ շահութաբեր է:
2012թ հունիսի 1-ի դրությամբ կատարվել է գյուղատնտեսական կուլտուրաների բերքի տակ կատարված ցանքերի հաշվառում, որը ներկայացվել է Արմավիրի վիճակագրական ծառայություն: Պատկերը հետևյալն է.
Աշնանացան հացահատիկ՝ 97.5 հա
Բոստանային կուլտուրաներ՝ 70.0 հա
Բանջարանոցային կուլտուրաներ՝ 81.0 հա
Առվույտ՝ 46 հա
Բազմամյա տնկարքներ՝ 80.5 հա
Այդ թվում պտղատու այգի՝ 28.8 հա
Խաղողի այգի՝ 51.7 հա

Պարբերաբար իրականացվում են գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր տեսակի հակահամաճարակային միջոցառումները կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 7 առևտրի և 2 կենցաղային ծառայության օբյեկտ , 1 մասնավոր ատամնաբուժարան:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ապօրինի ընդերք-օգտագործման վրա:

Վարձակալությամբ տրվել է գյուղ. նշանակության հողեր՝ 2.12 հա, կառուցապատման նպատակով (ջրային տարածք 25.1 հա):

Սիստեմատիկ տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշգրտումներ կատարելու վերաբերյալ:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման գործում: Բնակիչներին տեղեկացվում և ծանուցվում է «Հողի հարկի և գույքահարկի գծով առաջացած ապառքների մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Հուլիսի 1-ի դրությամբ կազմվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի հաշվեկշիռը: Պատկերը հետևյալն է.

Ընդամենը հողեր՝ 1142.17 հա, այդ թվում

Գյուղ. Նշանակության հողեր՝756.7 հա

Բնակավայրի նշանակության՝ 261.61 հա

Արդյունաբերական՝ 7.08 հա

Էներգետիկա, կապ 13.05 հա

Հատուկ պահպանվող՝ 6.24 հա

Ջրային տարածք՝ 97.49 հա:

Իրականացվում է գույքահարկի բազայում ճշգրտման աշխատանքները, որը շարունակական է: Ելնելով գյուղի առանձնահատկությունից՝ կապված գյուղմթերքների՝ հատկապես խաղողի արտադրման հետ, համայնքում կատարվող սոցիալ – տնտեսական աշխատանքները հիմնականում պլանավորվում է կատարել 2-րդ կիսամյակում:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Խստագույնս արգելվում է առանց համապատասխան շինարարության թույլտվության որևէ շինարարական գործունեության իրականացում: Սահմանված կարգով տրվում է շինարարության և քանդման թույլտվություն: 2012թ. Առաջին կիսամյակի ընթացքում քաղաքացիների հայտերի և դիմումների հիման վրա տրվել է 2 ճարտարապետահատակագծային առաջադրանք, 2 շինթույլտվություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:

Սիստեմատիկաբար կատարվում է խմելաջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքները:
Սահմանվում է հսկողություն խմելաջրի որակի, ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:
Սիստեմատիկաբար կատարվում է աղբահանություն, այդ նպատակով հատկացված է տրանսպորտ, 2 աշխատող, աղբը լցվում է հատկացված վայրում:

Շարունակվում է գազաֆիկացման աշխատանքները; գյուղապետարանի միջոցների հաշվին կառուցվել է մոտ 400 գծամետր ցածր ճնշման գազատար:
Ընթացքի մեջ է Արևիկ-Մրգաշատ գազատարի կառուցման աշխատանքները, ինչպես նաև գյուղապետարանի շենքի գազաֆիկացումը:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջնակարգ և 1 երաժշտական դպրոց:
Աշակերտների թիվը՝ 391:
Աշխատողների թիվը՝ 52-ը, որից՝ ուսուցիչներ՝ 40:
Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա: Այս ուսումնական տարում շուրջ 11 աշակերտներ ընդունվել են Հանրապետության պետական տարբեր բուհեր:
Գյուղապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ ՀՀ բանակի օրվա, մարտի 8-ի, հայրենական պատերազմի հաղթանակի և Շուշիի ազատագրման, Հայաստանի Հանրապետության տոնի կապակցությամբ: Զոհված ազատամարտիկների հուշարձանին և գերեզմանին դրվել են ծաղկեպսակներ: Ինչպես նաև հունիսի 1-ին երեխաների պաշտպանության օրվա առիթով կազմակերպվեց միջոցառում և երեխաներին բաժանվեց նվերներ, սեպտեմբերի 1-ին գիտելիքի օրվա կապակցությամբ 1-ին դասարանցիներին՝շուրջ 40 հոգու տրվել է գրենական պիտույքներ և պայուսակներ , ուսուցչի օրվա կապակցությամբ՝ կազմակերպվել է միջոցառում: 1-ից 4-րդ դասարանի աշակերտներին տրվել է նվերներ:
Կազմակերպվել է նաև միջոցառում անկախության օրվա և բերքի տոնի կապակցությամբ:
Դեկտեմբերի 30-ին ամանորի և սուրբ ծնունդի առիթով կազմակերպվել է միջոցառում համայնքի թոշակառուների և երիտասարդների, ինչպես նաև գյուղապետարանի և ֆեդերալ կառույցի աշխատողների համար, մասնակիցներին և 1-ից 4-րդ դասարանի աշակերտներին տրվել են նվերներ :
Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է նաև երաժշտական դպրոցը, որտեղ ուսուցանվում են 25 աշակերտ, աշխատում ՝ 6 ուսուցիչ: Մշակույթի տան հետ համատեղ կազմակերպվել է միջոցառումներ, տրվել է հաշվետու համերգ:
Վթարային վիճակում է գտնվում մանկապարտեզի շենքը. շուրջ 15 տարի այն չի գործում, որը բացասաբար է անդրադառնում մատաղ սերնդի դաստիարակման վրա:
Շենքի վերանորոգման համար պահանջվում է մեծ ֆինանսական միջոցներ, որը ներկայումս գյուղապետարանը ի վիճակի չէ հոգալու: Բազմիցս, որպես համայնքի կարևորագույն հիմնանդիր, հարց ենք բարձրացրել այն վերանորոգելու համար, սակայն ապարդյուն: Ակնկալում ենք պետական և դոնոր կազմակերպությունների հոգատար վերաբերմունքը այս հարցի վերաբերյալ:
Վթարային վիճակում է նաև մշակույթի տան տանիքը, 2-րդ և 3-րդ հարկերը (շենքը կառուցվել է 1960-ական թվականներին): Չնայած այս վիճակին, մշակույթի տունը գործում է:
Մշակույթի տան շենքում տեղավորված է նաև գրադարանը, որը վերանորոգված և կահավորված է, ունի 7916 կտոր գրականություն: Գրադարանը մշակույթի հետ համատեղ կազմակերպել է տարբեր բնույթի միջոցառումներ, գրական ցերեկույթներ:
Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով: Գործում է խաղաղասենյակ, որտեղ կազմակերպվում են տարբեր բնույթի խաղեր, մրցաշարեր, տրվում են մրցանակներ: Առաջին կիսամյակի ընթացքում անցկացվեց թենիսի մրցաշար: Հաղթողը պարգևատրվեց 75000 դրամի նչափով:

Գործում է ֆուտբոլային թիմ, որտեղ ընդգրկված են 1997-2001թթ. ծնված շուրջ 36 երեխաներ:

Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը: Աջակցում է սանիտարահիգենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը: Վերահսկվում է առողջապահական հիմնարկի աշխատանքները: Համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա: Բուժամբուլատորիան վերանորոգված է և հագեցած բժշկական սարքավորումներով:

Ուշադրության կենտրոնում է գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով ընտանիքները, որոնց տրվում է ֆինանսական օգնություն: 2-րդ կիսամյակի ընթացքում համայնքի շուրջ 28 սոցիալապես անապահով ընտանիքների տրվել է դրամական օգնություն 1600.0 հազ. դրամի չափով:

Համայնքի 3-րդ երեխա ունեցող 8 մայրերի որպես խրախուսում տրվել է 30 000- ական դրամ դրամական պարգև :

Համայնքում հաշվառված են ընդամենը՝ 256 թոշակառուներ, այդ թվում՝ 192-ը ծերության և աշխատանքային, 9-ը՝ կերակրողը կորցնողի, 55-ը՝ հաշմանդամության: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 40 ընտանիք: Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:

Համայնքի տնտեսությունների թիվը՝ 867, բնակչության թիվը՝ 2888 մարդ, որից 1490 տղամարդ և 1398 կին, գյուղատնտեսության մեջ զբաղված են 1927 մարդ:

2012թ ընթացքում համայնքում ծնվել են 37 երեխա, որից՝ 18 տղա, 19 աղջիկ, մահացածների թիվը՝ 21, որից 14 կին և 7 տղամարդ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2012թ. ընթացքում հավաքագրվել է եկամուտներ՝

հազ. դրամ

N	անվանումը	պլան	փաստացի	կատարողական
1.	հողի հարկ	6940.0	4327.2	62.4
2.	գույքահարկ	2228.7	4608.9	206.8
3.	տեղական տուրքեր	448.0	398.1	88.9
4.	տեղական վճար	20.0	244.7	1223.5
5.	ոչ հարկային եկամուտներ	2480.2	2373.3	95.7
6.	հողերի վարձավճար	1713.3	920.4	53.7
	ընդամենը սեփական եկամուտներ	13830.2	12872.7	93.1
7.	այլ եկամուտներ	927.4	927.3	99.9
8.	պետ. բյուջեից տրամադրվող դոտացիա	31862.8	31862.8	100.0
9.	անասնաբուժի աշխատավարձ	-	-	-
	ընդամենը վարչական բյուջե	46620.4	45662.7	97.9
10.	եկամուտներ կապիտալի գործառնությունից հողի օտարում	-	-	-
	Ընդամենը	46620.4	45662.7	97.9

2012թ. ընթացքում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազ. դրամ

N	ծախսերի անվանումը	պլան	փաստացի	կատարողական
1.	Տեղական ինքնակառավարում	20754.6	19740.1	95.1
2.	Համայնքային այլ ծառայություններ	3768.6	3327.6	88.3
3.	Ընդհանուր բնույթի այլ ծառ.	320.0	56.6	17.7
4.	Ճանապարհների վերանորոգում	638.0	630.0	98.7
5.	աղբահանություն	1405.0	1244.2	88.6
6.	ջրամատակարարում	5300.4	4699.1	88.7
7.	Մշակույթ,սպորտ և կրոն	6346.4	6161.9	97.1
8.	Կրթություն և գիտություն	1427.4	1427.3	99.9
9.	Սոցիալական ապահովություն	3000.0	1855.0	61.8
10.	Պահուստային ֆոնդ	4050	3509	86.6
11.	ընդամենը վարչական			
		47010.4	39141.8	83.3

2012 թ ընթացքում համայնքի ղեկավարի կողմից արձակվել է 31 կարգադրություն, ընդունվել է 206 որոշում:
Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 9 հրաման:
Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն, Արևիկի գյուղապետարանում 2012թ. 2-րդ կիսամյակում ստացվ ել է 196 դիմում, ընդ որում բոլորն էլ համայնքի ղեկավարին:
Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել պատշաճ լուծումներ:
Ընթացիկ ժամանակահատվածում գյուղապետարանում ստացվել է 147 գրություն, հղվել է 191 պաշտոնական գրություն: Քաղաքացիներին տրվել է 800 տեղեկանքներ:

2012թ. ընթացքում գյուղապետարանի և իր ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների թվաքանակը կազմում է 19 մարդ, որից՝ 4-ը համայնքային ծառայողներ, 8-ը՝ հայեցողական պաշտոններ և տեխնիկական աշխատողներ, 3-ը՝ ակումբ գրադարանի, 2-ը՝ կոմունալի, 2-ը՝ խմելաջրի սպասարկման և շահագործման նպատակով աշխատողներ:

2012թ. Ընթացքում աշխատավարձի և սոց . վճարումների գծով պարտքեր չկան:
2012թ. ընթացքումհամայնքի ավագանին գումարել է 6 հերթական և 1 արտահերթ նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր և կայացվել որոշումներ:

Համայնքի ղեկավարի 2012թ. ընթացքում կատարած աշխատանքները գնահատվեց բավարար:

Արևիկ համայնքի ղեկավար՝ Գ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ այլ ուղղություններով միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի բյուջեի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է՝

1. Խմելաջրի ջրագծերի վերանորոգում, նոր բնակեցված թաղամասերում ավելի քան 4 կմ ջրագծի անցկացում,
2. Խմելաջրի մեկ խորքային հորի հորատում և գործարկում նորակառույց թաղամասերում,
3. Մեկ հատ տրանսֆորմատորի տեղադրում,
4. Ոռոգման ներտնտեսային ցանցերի վերանորոգում և նոր կիսախողովակների անցկացում, որի արդյունքում կկրճատվի ջրի կորուստները,
5. Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում,
6. Միջհամայնքային ճանապարհների ասֆալտապատում. Արևիկ-Մրգաշատ հատվածը անանցանելի է,
7. Գազաֆիկացման աշխատանքների շարունակականության ապահովում,
8. Մշակույթի տան հիմնավերանորոգում,
9. Մանկապարտեզի շենքի նորոգում և գործարկում,
10. Միջհամայնքային կենտրոնական փողոցների լուսավորության ապահովում:

Արևիկ համայնքի ղեկավար՝ Գ. ԾԱՏՈՒՐՅԱՆ